

**Հարցաշար**  
**Առարկայական օլիմպիադայի**  
**«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի**  
**մարզային փուլ**  
**8-րդ դասարան**

**N 1-8**  
**Ընտրովի պատասխանով առաջադրանքներ**

1. Ի՞նչ կոչ էր անում Նոյը իր շրջապատի մարդկանց նախքան ջրհեղեղը: (0,5 միավոր)  
 1) Փախչել  
 2) Չղջալ  
 3) Տապան կառուցել  
 4) Իրեն միանալ
  
2. Թարգմանաբար ի՞նչ է նշանակում Մովսես անունը: (0,5 միավոր)  
 1) Աստծուց ուղարկված  
 2) Բարի լուր  
 3) Ազատիչ  
 4) Ջրից հանված
  
3. Ի՞նչ է կատարվում եկեղեցում Վերափոխման տոնին (0,5 միավոր)  
 1) Յուդի օրհնություն  
 2) Ջրօրհնեք  
 3) Խաղողի օրհնություն  
 4) Աղի օրհնություն
  
4. Հերակլ կայսրը ո՞ր թվականին է խաչափայտը ազատագրում գերությունից: (0,5 միավոր)  
 1) 641 թ.  
 2) 631 թ.  
 3) 621 թ.  
 4) 651 թ.
  
5. Ըստ ավանդության ի՞նչ անուն է տվել ս.Գրիգոր Լուսավորիչը ս.Տրդատ արքային. (0,5 միավոր)  
 1) Հովհաննես  
 2) Արիստակես  
 3) Տիգրան  
 4) Մեսրոպ
  
6. Ո՞ր թվականին է Հռոմեական կայսրությունում քրիստոնեությունը ազատ կրոն հռչակվել. (0,5 միավոր)  
 1) 301 թ.  
 2) 323 թ.  
 3) 303 թ.  
 4) 313 թ.
  
7. Ո՞ր կաթողիկոսի օրոք է հիմնվել Բջնիի եպիսկոպոսական աթոռը. (0,5 միավոր)  
 1) Խաչիկ Բ. Անեցի  
 2) Անանիա Ա. Մոկացի  
 3) Պետրոս Ա. Գետադարձ  
 4) Զաքարիա Ա. Չազեցի
  
8. Դվինի 893 թ. կործանաբար երկրաշարժից հետո ո՞ր է տեղափոխվում կաթողիկոսարանը: (0,5 միավոր)  
 1) Հռոմկլա  
 2) Զվարթնոց  
 3) Աղթամար  
 4) Անի

N9-12

**Կառուցված պատասխանով առաջադրանքներ**

9. Հայոց եկեղեցում կան երեք տեսակի պահոց օրեր՝ օրապահք, \_\_\_\_\_, Մեծ Պահք:  
(1 միավոր)

10. Հակոբի որդիներից առաջացան հրեական \_\_\_\_\_ ցեղերը: (1 միավոր)

11. Հայոց եկեղեցին սուրբ Գրիգոր Նարեկացու հիշատակը տոնախմբում է Սուրբ \_\_\_\_\_ հետ՝ հոկտեմբեր ամսին: (1 միավոր)

12. Սրի նման հատու և վճռական խոսքերի համար Ս. Արիստակես հայրապետին \_\_\_\_\_ էին անվանում: (1 միավոր)

N 13-14

**Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից**

13. Աշխատությունները համապատասխանեցնել հեղինակներին. (1 միավոր)

- |                                  |                             |
|----------------------------------|-----------------------------|
| 1. «Հայոց պաշտամունքային վայրեր» | ա. Մատթեոս Ուռհայեցի        |
| 2. «Ժամանակագրություն»           | բ. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ |
| 3. «Պատմություն Հայոց»           | գ. Ստեփան Մելիք-Բախշյան     |
| 4. «Տիեզերական պատմություն»      | դ. Հովհաննես Դրասխանակերտցի |
|                                  | ե. Արիստակես Լաստիվերցի     |

1	
2	
3	
4	

14. Գահակալման տարիները համապատասխանեցնել Հայոց կաթողիկոսի անվանը. (1 միավոր)

- |                           |                  |
|---------------------------|------------------|
| 1. Ս. Ներսես Ա. Պարթև     | ա. 461 – 478 թթ. |
| 2. Բաբկեն Ա. Ոթմսեցի      | բ. 574 – 604 թթ. |
| 3. Ս. Հովհաննես Գ. Օձնեցի | գ. 353 – 373 թթ. |
| 4. Ս. Գյուտ Ա Արահեզացի   | դ. 490 – 516 թթ. |
|                           | ե. 717 – 728 թթ. |

1	
2	
3	
4	

N15-16

**Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը՝ 5 փաստից**

15. Նվիրապետական աստիճանները դասավորել ըստ հերթականության (սկսած բարձր աստիճանից). (1 միավոր)

- ա. Դպիր
- բ. Կաթողիկոս
- գ. Սարկավագ
- դ. Քահանա
- ե. Եպիսկոպոս

1	
2	
3	
4	
5	

**16. Իրադարձությունները դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության.  
(1 միավոր)**

- ա. Շահապիվանի ժողով
- բ. Շիրակավանի ժողովը
- գ. Աշտիշատի ժողովը
- դ. Կ.Պոլսի Տիեզերական ժողով
- ե. Նարեկավանքի հիմնադրում

1	
2	
3	
4	
5	

**№ 17**

***Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից***

**17. Կարդալ և պատասխանել հարցերին.**

Իմ կրնունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սրբազան,  
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.  
Սարը եղավ կնքահայրս, ցողը՝ մյուռոն կենսավետ,  
Ու կնքողս Նա Ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:

**1) Ո՞վ է քառյակի հեղինակը: (1 միավոր)**

---

**2) Քառյակից ո՞րս գրեք մկրտությանը և դրոշմին վերաբերող 5 բառ: (1 միավոր)**

---

**N 18-19**

**Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով**

**18. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ. (2 միավոր)**

- 1) Զաքարիա Չազեցի կաթողիկոսը երեք անգամ գումարել է հայ աշխարհիկ և հոգևորականների ժողով:
- 2) Աղթամարում են աթոռակալել Անանիա Ա. Մոկացուն հաջորդած երեք կաթողիկոսները:
- 3) Մաշտոց Ա. Եղիվարդեցին կաթողիկոս է ձեռնադրվում 897 թ.:
- 4) Սարգիս Ա. Սևանցու աթոռակալության ժամանակ գլուխ էր բարձրացրել թոնդրակեցիների աղանդը, և կաթողիկոսն անզիջում պայքար էր մղում նրանց դեմ
- 5) Անիի պարսպի ավագ դռան վրա դրոշմված է Բագրատունիների զինանշանը, որը պսակված է եկեղեցու գմբեթի պատկերով:

--	--

19.Թվարկված տոներից ո՞ր երկուսը տաղավար տոներ չեն.

(2 միավոր)

- 1) Խաչվերաց
- 2) Պայծառակերպություն
- 3) Սուրբ Ծնունդ
- 4) Տյառնընդառաջ
- 5) Սուրբ Հարություն
- 6) Ծաղկագարդ
- 7) Սուրբ Աստվածածնի վերափոխում

--	--

№ 20

Շարադրանք (2 միավոր)

20. Ներկայացրե՛ք և գնահատե՛ք Զաքարիա Ա. Չազեցի կաթողիկոսի գործունեությունը: